ՀՏԴ 330.341.2

Մ.Կ. ԱՂԱՅԱՆ, Գ.Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Հ.Ն. ԳԱԼՍՏՅԱՆ

ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դիտարկվում են գլոբալացման գործընթացները, որոնք մեծ դեր ունեն ազգային տնտեսությունների գործունեության մեջ: Գլոբալացումը ենթադրում է անցում միասնական համաշխարհային տնտեսությանը՝ հիմնված ազատականացման սկզբունքների վրա: Այն տարբեր երկրների տնտեսությունը տեղափոխում է դեպի որակապես այլ մակարդակ, հաճախ վերացնելով դրանց մշակութային-պատմական, ազգային առանձնահատկություններն ու ավանդույթները: Այս իմաստով անհրաժեշտություն է դառնում ինստիտուցիոնալ վերափոխումների կշռադատված և ճկուն քաղաքականության իրագործումը՝ հաշվի առնելով ինստիտուցիոնալ շահերի և դրանց իրացման ձևերի ողջ սպեկտրը:

Առանցքային բառեր. գլոբալացում, մոդեռնացում, ավանդական հասարակություն, ազգային տնտեսություն, ազգային հոգեկերտվածք, ինստիտուտ, արևմտացում, մրցակցություն, համաշխարհային շուկա:

Ներկա պայմաններում քաղաքակրթությունը հայտնվել է ինտենսիվ, խորքային տրանսֆորմացիոն գործընթացներում: Տվյալ երևույթը սերտ առնչություն ունի «գլոբալացում» հասկացության հետ: Գլոբալացումը բազմակողմ գործընթաց է և ենթադրում է միասնական տնտեսական, մշակութային ու քաղաքական հարթության ձևավորում: Սակայն գլոբալացման գործընթացներում առկա է որոշակի հակասականություն: Բանն այն է, որ գլոբալացման այդ բազմակողմ լինելը թույլ չի տալիս օգտագործել հետազոտման առկա մեթոդոլոգիական սխեմաները, որոշել նրա իրական հետևանքները:

Ժամանակակից համաշխարհային տնտեսության մեջ գլոբալացման գործընթացները դարձել են զարգացման գերակա վեկտոր, որոնք մեծ դեր ունեն գրեթե բոլոր ազգային տնտեսությունների գործունեության մեջ: Դրանք դրսևորվում են հասարակության կյանքի բոլոր ոլորտներում՝ առաջ բերելով փոփոխություններ և դրանցով պայմանավորված հետևանքներ տարբեր քաղաքակրթությունների, սոցիալական խմբերի, կրոնական դավանանքների միջև առկա փոխհարաբերություններում: Բնականաբար, գլոբալացման գործընթացների նման բուռն զարգացման մեջ իրենց որոշակի դերակատարությունն ունեն գիտատեխնիկական հեղափոխությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և, վերջապես, մարդկային գիտակցության որակական փոփոխությունը: Գլոբա-

լացումը ինտեգրման գործընթաց է, որը ենթադրում է համաշխարհային տնտեսության զարգացում, շուկայական հարաբերությունների վերափոխում, գիտատեխնիկական առաջընթաց: Յուրաքանչյուր երկրի համար միջազգային տնտեսական հարաբերություններում առաջնային է դառնում ազգային տնտեսության զարգացումը, ընդ որում, միջազգային հարաբերությունների ցանկացած մասնակից ձգտում է առավելագույնի հասցնել գլոբալացման դրական արդյունքները: Այնուամենայնիվ, կախված շահագրգիռ կողմի դիրքորոշումից՝ գլոբալացման ցանկացած հետևանք կարելի է մեկնաբանել և դրական, և բացասական դիտանկյունից: Այն, ինչ մեկի համար բարիք է, մյուսների համար կարող է լինել չարիք և ներկայացնել վտանգ: Նմանօրինակ փոփոխությունները զգալիորեն տրանսֆորմացնում են միջազգային մրցակցության բնույթը՝ այն տեղափոխելով դեպի գլոբալ մակարդակ:

Գլոբալացումը հաճախ ներկայացվում է իբրև մոդեռնացման գործընթացի բաղադրիչ, մասնավորապես՝ հասարակության զարգացման անհրաժեշտ տարր, ազգային տնտեսությունների, քաղաքական համակարգերի ազատականացման, արևմտյան քաղաքակրթությանը բնորոշ կենսաձևերի յուրացման գործընթաց:

Յուրաքանչյուր քաղաքակրթության գործունեության մեթոդները և տնտեսության տիպը մշակվում են՝ հիմնվելով տնտեսական կյանքի պատմական փորձի, տարբեր աշխարհագրական, ժողովրդագրական և այլ գործոնների վրա: Ընդ որում, նշանակալի դեր են խաղում, հատկապես, ազգային հոգեկերտվածքը և դրա հետ սերտորեն կապված ավանդույթները, վարքագծի և սովորույթի նորմերը: Իրենց հերթին, վերջիններս համարվում են այն նորմերի գոյության ձևը, որոնք կուտակվում և փոխանցվում են սերնդեսերունդ: Այստեղ իրենց ուրույն տեղն ունեն ավանդական հասարակության ինստիտուտները, որոնցով պահպանվում է հասարակայնորեն նշանակալի իրավիճակների կրկնությունը [1]:

Ըստ արևմտյան քաղաքակրթության՝ ավանդույթը անցյալի ժառանգությունն է, իսկ ավանդական հասարակությունը, անկախ պատմական զարգացման առանձնահատկություններից, դեպի ժամանակակից ինդուստրիալ կամ «համընդհանուր բարեկեցության հասարակությանը» ցանկացած մարդկային համակեցության ուղղագիծ շարժման միջանկյալ, նույնիսկ սկզբնական փուլերից մեկն է: Այս տեսանկյունից մոդեռնացումը, դիտարկվելով որպես ազգային տնտեսությունների և քաղաքական համակարգերի ազատականացման գործընթաց, ներկայացնում է անցում ավանդական հասարակությունից ժամանակակից հասարակությանը: Մոդեռնացման տեսության կողմնակիցների կարծիքով,

սա միակ հնարավոր և պատմականորեն նախանշված ուղին է, որով պետք է անցնեն և անցնում են բոլոր ազգերն ու երկրները: Սակայն այս անցումը տարբեր ազգերի դեպքում ժամանակային առումով տարբեր է: Թերևս սրանով է պայմանավորված նրանց տեղն ու ձեռք բերած բարեկեցության աստիճանը զարգացած երկրների շարքում: Գլոբալացումը ենթադրում է անցում միասնական համաշխարհային տնտեսությանը՝ հիմնված ազատականացման սկզբունքների վրա: Այն անշրջելի գործընթաց է ոչ միայն տնտեսական ոլորտում, այլ ամբողջ հասարակական կյանքում, որը պայմաններ է ստեղծում ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների ազատ տեղաշարժի համար:

Գլոբալացումը տարբեր երկրների տնտեսությունը տեղափոխում է դեպի որակապես այլ մակարդակ, հաճախ հարթելով, անգամ վերացնելով դրանց մշակութային-պատմական առանձնահատկությունները, որին էլ, ըստ էության, ուղղված է մոդեռնացման գործընթացը: Վերջինիս համար արգելակող գործոն են ներկայանում ազգային առանձնահատկություններն ու ավանդույթները: Այլ խոսքով, գլոբալացումը և մոդեռնացումը, ոչնչացնելով ազգայինը, սահմանում են այլ՝ անընդհատ փոփոխվող ռացիոնալիզմի ավանդույթներ: Մոդեռնացման և գլոբալացման տեսաբաններն առանձնացնում են կերպափոխությունների բարենպաստ և ոչ բարենպաստ գործոններ, պնդելով, որ մոդեռնացման ընթացքում հարկ է վերացնել ոչ բարենպաստ գործոնները:

Տնտեսական զարգացման վրա ազդող բոլոր գործոններից հատկապես առանձնացվում է մարդը՝ որպես ամենակարևոր գործոն և տնտեսական գործունեության սուբյեկտ: Սրա հետ կապված՝ ներկայումս ազգային հոգեկերտվածք հասկացությանը տրվում է առաջատար դեր, իսկ մարդու գիտակցության, նրա պատկերացումների, տնտեսական մտածողության ձևի, գործողությունների նորմերի, հոգեկերտվածքի փոփոխությունը համարվում է հասարակության մոդեռնացման առանցքային պահը:

Կերպափոխումների ոչ բարենպաստ գործոններին են վերաբերում ավանդական հասարակության տարրերի պահպանումը և բնակչության մեծ մասի շրջանում ռացիոնալ գիտակցության բացակայությունը: Մ.Վեբերը ընդունում էր, որ «առաջին հակառակորդը, ում բախվել է կապիտալիզմի «ոգին», և որն իրենով ի ցույց դրեց նորմերով պայմանավորված ու բարոյական կերպարանքով հանդես եկող կյանքի որոշակի աճ, վարքագծի և ըմբռնման տիպն էր, որը կարելի է անվանել «տրադիցիոնալիզմ» [2]: Այդ իսկ պատճառով որոշ տնտեսագետներ գտնում են, որ «նոր կուլտուրական ստերեոտիպի զարգացումը» ձևա-

վորում է մոդեռնացման ողջ գործընթացի միջուկը, իսկ մոդեռնացման գործընթացում առաջնահերթ խնդիր է դառնում ավանդական սեկտորի, ավանդական սոցիալ-տնտեսական և հասարակական քաղաքական ինստիտուտների ոչնչացումը, լավագույն դեպքում դրա կերպափոխությունը: Բնականաբար, այստեղ խոսքը վերաբերում է գիտակցության փոփոխությանը կամ ճշգրտմանը, որը հանգեցնում է նոր սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային ինստիտուտների և հարաբերությունների, արժեքների ու նորմերի ձևավորմանը: Ընդ որում, դրանք պետք է համապատասխանեն կամ առնվազն չհակասեն արևմտյան հասարակության կողմից ընդունված որոշակի իդեալներին, քաղաքացիական հասարակության ինստիտուտներին ու նորմերին:

Բնական ու սոցիալական տարբեր գործոնների ազդեցությամբ ձևավորվում են անհատի տարբեր տիպեր, տարբեր ազգային հոգեկերտվածքներ: Դրանց տարբերությամբ էլ հենց պայմանավորված են տնտեսական ազատությունների, տնտեսական գործունեության հիմնական սկզբունքների և բովանդակության տարբեր ըմբռնումները:

Արևմտյան քաղաքակրթության ներկայացուցիչներին, «անհատապաշտական ես»-ի գիտակցության հետևանքով, բնորոշ են այնպիսի որակներ, ինչպսիք են, օրինակ, գործունյա լինելը, գյուտարարության ձգտումը, հաշվենկատությունը, ռիսկայնությունը, սառնասրտությունը, զգացմունքային կոպտությունը, անկախության ձգտումը, բարեխղճությունը, այլ ազգերի նկատմամբ գերազանցության ձգտումը, ինքնակազմակերպման և կարգապահության կարողությունը…Ոչ մի այլ մարդկային որակների հետ չի կարելի վերարտադրել արևմտյան քաղաքակրթությունը, պահելով այն ձևի մեջ և այն մակարդակի վրա, որին այդ քաղաքակրթությունը հասել է [3]: Այս իմաստով տեղին է վկայակոչել գիտնականներից մեկի այն միտքը, թե «տնտեսական հարաբերությունների առումով երկիրը չլինելով ինքնուրույն, քաղաքական առումով չի կարող կախված չլինել այլ, ավելի ուժեղ երկրից: Ուժեղ երկրների միջև կարող է լինել միայն տնտեսական և քաղաքական ուժերի հավասարակշռություն: Եթե տնտեսությունը թուլանում է, ապա հավասարակշռության պահպանման համար պետք է ուժեղանա քաղաքական բաղադրիչը՝ սովորաբար ռազմական ուժի կամ նման վտանգի օգնությամբ: Եթե նման բան չկա, ապա առավել ուժեղ կողմը սկսում է տնտեսության վրա ճնշումներ գործադրելիս թելադրել իր պայմանները [4]:

Նշանավոր գրող, սոցիոլոգ Ա.Ա. Զինովևը, երկար տարիներ ապրելով Արևմուտքում և այն լավ իմանալով «ներսից», իր աշխատանքներից մեկում կիրառության մեջ է դնում «արևմտացում» տերմինը, որը, ըստ էության, նշանակում է, «Արևմուտքի՝ այլ երկրներն իր նման դարձնելու ձգտումը ըստ սոցիալական կարգի, տնտեսության, գաղափարախոսության, հոգեբանության և մշակույթի «: Նա միաժամանակ նկատում է, որ այս գործընթացի շղթան այլ երկրներն այնպիսի վիճակի հասցնելն է, որ նրանք կորցնեն ինքնուրույն զարգանալու ունակությունը, դրանք ընդգրկելով Արևմուտքի ազդեցության տիրույթի մեջ, ընդ որում, ոչ իրավահավասար ու ոչ հավասարազոր գործընկերների կարգավիճակով, այլ որպես արբանյակ կամ, ավելի ճիշտ կլինի ասել, նոր տիպի գաղութ»[3]: Այս գործընթացը ձեռք է բերել բոլորի կողմից ընդունված, բարեհունչ «գլոբալացում» անվանումը, իսկ ուսմունքը, որն արտացոլում է այս գործընթացի զարգացման օրինաչափությունը, բացատրում նրա գոյության տրամաբանությունը, կոչվում է «գլոբալիզմ»:

Գլոբալացումն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Ինչ վերաբերում է դրականին, ապա այն ենթադրում է աշխատանքի միջազգային բաժանում, տեխնոլոգիական նորարարությունների գնալով մեծացող փոխանակություն, կապիտալի և աշխատուժի բարձր մոբիլություն, ապրանքային և փողային շուկաների ընդլայնում: Մինչդեռ գլոբալացման բացասական հետևանքները սպառնում են ոչ միայն զարգացող, այլ նաև գլոբալացման ֆավորիտ հանդիսացող տնտեսապես զարգացած երկրներին: Խոսքը վերաբերում է սոցիալական շերտավորման խորացմանը, ընդ որում, ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ տարածաշրջանների ու ամբողջ պետությունների մակարդակով, երկրների տնտեսական ինքնիշխանությունը և ինքնաբավությունը կորցնելուն: Բացի այդ, ֆինանսական ճգնաժամերի նկատմամբ երկրները դառնում են խոցելի, որոնց պատճառները անվերահսկելի են: Ի վերջո, տեղի է ունենում արդյունաբերության ապաինդուստրացում և ապապետականացում, որն արտահայտվում է կապիտալի՝ դեպի էժան աշխատուժ ունեցող երկրներ տեղաշարժի ձևով, իսկ տնտեսապես զարգացած երկրների աշխատուժը հնարավորություն չի ունենում մրցակցել զարգացող երկրներից ներգաղթող էժան աշխատուժի հետ [5]:

Այսպիսով, գլոբալացման զարգացող գործընթացի արդյունքում կարող են տուժել բոլոր երկրները, անկախ իրենց տնտեսական վիճակից: Որպես շահող հանդես են գալիս տրանսազգային համակարգերը, որոնք միավորում են տնտե-

սական և ոչ միայն տնտեսական զարգացման վեկտորները որոշող արտադրական, ֆինասական, գիտական և տեղեկատվական կառույցները:

Գլոբալացման բացասական հետևանքների թուլացման համար անհրաժեշտ է ընտրել զարգացման սեփական վեկտորը՝ հիմնված ազգային տնտեսությունների ուժեղացման վրա, որոնք պետք է օպոզիցիա դառնան ազատ շուկային, որպեսզի չզրկվեն ինքնիշխանությունից և չհայտնվեն կախվածության մեջ տրանսազգային կորպորացիաներից:

Իրական աշխարհում պետք է լինեն միմյանց հետ փոխգործող ազգային տնտեսություններ, ընդ որում, առանձին վերցրած ազգային տնբտեսության մեջ խիստ կարևոր որոշումները պետք է կայացվեն՝ ելնելով միայն տվյալ ազգի շահերից:

Գլոբալացման գործընթացների վերլուծությունը ցույց է տալիս, որ զարգացած տնտեսական համակարգ ունեցող ազգային պետություններն իրենց վրա ավելի շատ զգում են գլոբալացման թրենդների դրական ազդեցությունը, առավել լրիվությամբ են իրացնում իրենց մրցակցային առավելությունները, քան համաշխարհային տնտեսության մնացած սուբյեկտները:

Ուժեղացող մրցակցային պայքարի պայմաններում տեսական եզրահանգումներն այն մասին, թե շուկայական մեխանիզմն ի վիճակի է ամբողջությամբ ապահովել ռեսուրսային պոտենցիալի օպտիմալ օգտագործումը, էմպիրիկ հետազոտություններում իրենց համապատասխան հաստատումը չեն գտնում: Տնտեսական պատմությունը ցույց է տալիս ազգային մակարդակների վրա ձևավորված պետական մեխանիզմների՝ շուկայական համակարգի մի շարք ձախողումների կարգավորման ունակությունը: Այլ խոսքով, գլոբալացման պայմաններում պետության ինստիտուտը վերակառուցվում է, վերակազմավորվում՝ ընթանալով ուժգնացող միջազգային մրցակցության պահանջներին համապատասխան, սակայն չի կորցնում իր գերակա գործառույթներն ու ֆունկցիոնալ պոտենցիալը:

Գլոբալացման ժամանակակից միտումները՝ մի կողմից, համաշխարհային շուկայում ուժեղացող մրցակցային հակասությունները՝ մյուս կողմից, թույլատրում են պահպանել ազգային պետությունների գերիշխող դիրքը տրանսազգային համալիրների, շրջանային միությունների միջազգային կազմակերպությունների և համաշխարհային տնտեսության այլ սուբյեկտների համեմատությամբ: Ակնհայտ է, որ գլոբալացման դրական էֆեկտները ինքնաբերաբար չեն տարածվում այդ գործընթացում ընդգրկված բոլոր սուբյեկտների վրա: Միայն այն

պետությունները, որոնք գլոբալացումը նույնացնում կամ ընկալում են որպես ազգային տնտեսական քաղաքականության ձևավորման օբյեկտիվ արտաքին պայման, սոցիալ-տնտեսական նպատակների իրացման գծով իրագործում են իրենց տնտեսական կառուցվածքի առանձնահատկությանը համապատասխանող միջոցառումներ և կարող են ներդաշնակորեն ինտեգրվել ձևափոխվող աշխարհին: Այս իմաստով, անհրաժեշտություն է դառնում ինստիտուցիոնալ վերափոխումների կշռադատված և ճկուն քաղաքականության իրագործումը՝ մի կողմից՝ հաշվի առնելով ինստիտուցիոնալ շահերի և դրանց իրացման ձևերի ողջ սպեկտրը, համակարգելով բոլոր ֆորմալ և ոչ ֆորմալ տնտեսական ինստիտուտները, մյուս կողմից՝ վերանայելով ոչ արդյունավետ ինստիտուցիոնալ ֆորմացիաները: Շուկայական ինֆրակառուցվածքի ստեղծումը, որն ապահովում է նվազագույն տրանսակցիոն ծախքեր, որոնք անմիջականորեն կապված են տնտեսական ինստիտուտների գործունեության հետ, ենթադրում է պետության կողմից ինստիտուցիոնալ բաղադրիչի հաշվառում: Նկատենք, որ ի վերջո պետությունն է հասարակությանը ուղղորդում դեպի սոցիալ-տնտեսական համակարգի առավել արդյունավետ զարգացման վեկտորը:

Այսպիսով, գլոբալացման պայմաններում, կապված համաշխարհային տնտեսական համայնքի բոլոր անդամների միջև մրցակցային հակադրությունների խորացմամբ, ազգային մակարդակի վրա գտնվող տնտեսական զարգացման ցանկացած պետական ծրագիր պետք է հաշվի առնի ժամանակակից տնտեսական ինստիտուտների գործունեության փաստացի գործընթացների արդյունքները, ինչպես նաև ինստիտուցիոնալ վերափոխումների առաջիկա միտումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Деньгов В.В.** Глобализация и проблема нежелательного отбора на мировых рынках кредитных ресурсов //Globalizacia a Jej Sociano-Ekonomicke Dosledky" ll.zbornik z medzinarodnejvedeckej konferencie. -2011.-P. 89-93.
2. **Вебер М.** Протестантская этика и дух капитализма.-М.: Прогресс,1990.-808с.
3. **Зиновьев А.А.** Запад. Феномен западнизма.-М.:Центрполиграф, 1995.-461с.
4. **Тихомиров Л.А.** Вопросы экономической политики.-М.: Универс.тип., 1990.-83с.
5. **Бьюкенен П.** Экономический национализм или глобальная экономика //Предпринимательство.-2001.- N1.-С.62-74.

М.К. АГАЯН, Г.С. ГРИГОРЯН, А.Н. ГАЛСТЯН

ОБ ИНСТИТУЦИОНАЛЬНЫХ ПРЕОБРАЗОВАНИЯХ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ

Рассматриваются процессы глобализации, которые имеют большую роль в деятельности национальных экономик. Глобализация подразумевает переход к единой глобальной экономике, основанной на принципах либерализации. Глобализация выводит экономику различных стран на качественно иной уровень, часто уничтожая их культурно-исторические, национальные особенности и традиции. В этом смысле становится необходимой реализация благоразумной и гибкой политики институциональных преобразояаний, принимая во внимание весь спектр институциональных интересов и всех видов их реализации.

Ключевые слова: глобализация, модернизация, традиционное общество, национальная экономика, национальный менталитет, институт, западнизм, конкуренция, мировой рынок.

M.K. AGHAYAN, G.S. GRIGORYAN, H.N. GALSTYAN

INSTITUTIONAL TRANSFORMATIONS UNDER GLOBALIZATION CONDITIONS

The processes of globalization, which have an important role in the activities of national economies are examined . Globalization implies transition to a global economy based on liberalization principles. Globalization takes economies of different countries to a new qualitative level often removing their traditions and culture, as well as the historical and national characteristics. In this case, it becomes necessary to do institutional of both transformations taking into account the whole spectrum institutional interests and their implementation types.

Keywords*:* globalization, modernization, traditional society, national economy, national mentality, institution, westernism, competition, world market.